ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակութիւն):

Արդարեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անցելոյն մէջ փառաւոր արդեամբք արժանաւոր եւ նուիրական անուն եւ յիշատակ արձանած է Մեծն Ներսէս, որոյ Հայրապետական իշխանութիւն պարտաւորեալ եւ կարի ծանրաբեռնուած էր կրկին վսեմ պաշտօնով՝ այսինքն ա, Եկեղեցւոյ բարեկարգութեան եւ բ, Ազգի փրկութեան նուիրական զբաղմունքով:

Նորին ազգասէր՝ հոգեվառ եւ եռանդուն սրտի եւ զգացմանց առջեւ ամէն կերպ դժուարութիւնք կարծես առ ոչինչ գրուած էին՝ ուշ դնելով եւ ձիգ թափելով միայն իւր նպատակները պսակել յօգուտ Ազգի եւ Եկեղեցւոյ:

Այն ժամանակուայ Թագաւորական տան վատթար՝ սասանեալ եւ կորստաբեր ընթացքի արդիւնաւորած աղէտք՝ խոչընդոտք եւ խռովայոյզ ներգործութիւնք առաւել կնճռոտած էին Եկեղեցւոյ եւ Ազգի վիճակը:

Բայց եւ այնպէս Մեծն Ներսէս Երանելին նախ քան զամենայն ձեռնարկեց Եկեղեցւոյ բարեկարգութեան, ըստ որում ինչ ինչ խանգարմունք եւ շփոթութիւնք սպրդել սկսած էին եկեղեցւոյ բարեկարգութեանց մէջ, զորս առաւելութեամբ իմն յուղղութիւն փոխադրեց՝ ինչպէս որ կգրէ Խորենացին՝ (Գիրք Գ. գլ. Ի) "զամենայն կարգս ուղղութեանց Հարցն իւրոց նորոգեաց, այլ եւ առաւել եւս,,:

Ազգային ժողով գումարեց եւ նախարարաց մէջ եղած մի քանի սովորութիւնքը կանոնադրութեամբք արգիլեց, եւ բարոյական եւ առաքինասէր գեղեցիկ նպատակներով բազում կարգի եւ աստիճանի թշուառ եւ տառապեալ անձանց համար ապաստանարաններ եւ խնամատուներ շինել սահմանեց եւ գործադրեց՝ ապահով հասոյթներ յատկացնելով եւ կարեւոր հրահանգ եւ կանոններ սահմանադրելով, որոյ վերայ յատուկ վերակացուներ եւս կարգեց՝ որպէս զի միշտ հոգ եւ խնամ տանին եւ յուսահատ կամ յակամայից բռնադատեալ չքաւորութեանց առաջքը առնուին:

Երկու հազարէն աւելի եղբայրանոցներ եւ քսենէր (կամ օտարոցներ) յաւելացուց եւ հաստատեց, եւ պտոխոտրոփոնէան եւ կէրօնոնէան զարգացման եւ ընդհանրացման խորին ուշադրութիւն տուաւ եւ անխոնջ հետամուտ հանդիսացաւ: Որով կանխաւ հիմնուածները եւ նորոգ հաստատուածները բարեկարգելով եւ արդիւնաւորելով հանդերձ՝ ժառանգաւորաց կրթութիւնը միակ դարման գտաւ Հայրենեաց եւ Ազգի փրկութիւնը եւ յարատեւ ապահովութիւնը նուիրագործելոյ համար:

Մինչ այսպիսի ջանիւք կշահատակէր Մեծն Ներսէս, միանգամայն Թագաւորական տան եւ նախարարաց մէջ տիրած երկպառակութիւնքը անհետացնել կտքնէր հաշտասէր եւ խաղաղարար միջոցներով, — որպէս զի ազգային միութիւնը եւ զօրութիւնը չվտանգուի ի վնաս եւ ի կործանումն Հայրենեաց, — կսկսին արտաքին յարձակումներ, որք յունական եւ պարսկական ազդեցութեանց անընդհատ արդիւնքներն էին, զորս Թագաւորական տան անխոհեմ եւ անհեռատես շարժմունքներ կթելադրէին եւ կզրգռէին, ուստի մերթ

կխուժայ ընդառաջ ի Թշնամւոյն ի պաշտ-
պանութիւն Հայրենեաց և ցասուցեալ
սրտի զայրոյթը զիջուցանելոյ, երբեմն
կդիմէ ի Պօլիս մօտալուտ վտանգէն և
կործանմանէն զԱզգ և զԵկեղեցին ազա-
տելոյ համար՝ միջնորդելոյ, թողում՝ որ
այսպիսի առիթներով օտար երկրի մէջ
օտար իշխանութենէն անապատ տեղ կաք-
սորուէր, ի վիշտս և ի բանտս կմատ-
նուէր, անտանելի տանջանաց և նախա-
տանաց կենթարկուէր, և այս ամէնը սի-
րով կտանէր Ազգի և Եկեղեցւոյ օգտի
և փրկութեան համար։

Երբ ժամանակ եղաւ՝ որ իւր որդիք
օտարաց ապաստանելով՝ Հայ Թագաւո-
րական տան ձեռքէն ազատուելոյ հնարք-
ներ կորոնէին և օտար Թագաւոր գտա-
նել կջանային, Մեծն Ներսէս կզգար ան-
խոհեմ ընթացից առաւել վատթար և
չարագուշակ հետևանքները, Ազգի փըր-
կութիւնը՝ Ազգի միաբան գործողու-
թեանց և հայրենի Թագաւորին հնա-
զանդ կալով՝ ձեռք բերել և օտարէն ըզ-
գուշանալ կխրատէր՝ այս նշանաւոր խօս-
քերը ևս աւանդելով՝ «եթէ բիւր չար
իցէ Արշակ Թագաւոր Հայոց, սակայն
Աստուածապաշտ է, և եթէ մեղաւոր ևս
իցէ, սակայն Թագաւոր ձեր է»։ (Բուզ.
գիր. Դ. գլ. ԺԱ)։

Այս համառօտ նկարագրութենէ դիւ-
րին է իմանալ Մեծին Ներսէսի կրած
տառապանքները և սրտի վշտերը, նա և թէ
որպէս վշտակոծ կհառաչէր՝ երբ ի Պօլիս
կլսէր իւր ժողովրդեան մէջ սերմանուած
եղբարասպան խռովութիւնքը, Մեհրու-
ժանի ջանքերը Քրիստոնէութիւնը ջըն-
ջելոյ և Եկեղեցին կործանելոյ համար, և
թէ ինչ հնարներ կըգտնէր և Թէոդոսի
օգնութեամբք և բարերարութեամբք զԱզգ
և զԵկեղեցին կփրկէր, Թագաւորութիւնը
կվերահաստատէր, զորս երկարապատում
կհաղորդեն մեր պատմիչք։

Գոգցես սոցա փոխարէն էր և ի լրումն
տառապանաց՝ զի բարերարած և պաշտ-
պանած Պապէն մահատու թոյնով ևս
ազգօգուտ կենացն թելը ընդհատեցաւ,
թէպէտ իւր ջանքերն և աշխատութիւնք
բաւականին պսակուած էին, որոց դէմ
ոչ ինչ թոյն ներգործել կըյաջողէր։

Երանելւոյն դրած և յարդարած բա-
զում կարգ և կանոն և ուղղութիւնք
գրեթէ յարատևեցին մինչև սուրբ Սա-
հակ Պարթևի օրեր, թէպէտ քաղաքա-
կան յեղափոխութիւնք ևս անպակաս էին
Հայաստանի մէջ, որք՝ ինչպէս միշտ՝ բա-
ւականին հարուածք կշռեցին նաև Եկե-
ղեցւոյ և Ազգի վերայ և հետզհետէ խան-
գարմունք և զեղծմունք ներմուծեցին և
սպրդեցին, բայց Աստուածային ողորմու-
թիւն միշտ Եկեղեցւոյ պաշտպան և օգ-
նական լինելով՝ կմխիթարէր իւր սիրելի
ժողովուրդը երբեմն հզօր և արժանաւոր
Հայրապետ և Առաջնորդներ պարգևելով,
որք բազում չարեաց և վտանգներու ա-
ռաջքը առնլով՝ նա և միշտ ուղղութիւնք
և բարեկարգութիւնք կյաւելուին, և
հանապազ ժողովրդեան դաստիարակու-
թեան և կրթութեան, ինչպէս նաև բա-
րօրութեան համար անխոնջ ջանադիր
կլինէին և կըհետևէին եռանդավառ ծը-
գամբք։

Գրեթէ արտաքուստ հալածմունք և
վտանգաւոր ազդեցութիւնք՝ իսկ ի ներ-
քուստ երկպառակութիւնք առաւել դա-

ոբն կատարուբերեին զ՝այասատան ի վիշտս և յաւելուակ՝ երբ Վ՝երին Նախախնամութիւն հաճեցաւ շնորհել Հայոց Եկեղեցւոյ երկու հզօրագաշտպաններ և Ընխոյեաններ, որոց առաջինն էր Ս. Սահակ Պարթև Կաթուղիկոս, և երկրորդն՝ Ս. Մեսրովբ Երանելին։

Սոցա ջանիւք պարգևեցաւ Հայոց մի ՈՍԿԵԴԱՐ, յորում սուրբ ՍԱՀԱԿ և ՄԵՍՐՈՎԲ ծագկեցան, և այս էր ի հինգերորդ դար։

(Շարունակելի)

ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԻ.

«ՄԱՆՐ ՈՒՍՄՈՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ»

ԳՐԵԱԼ Ի ՄՍԵՐԱՑ Մ. ՋՄԻՒՈՆԱՅՈՑ.

Ամբողջ տետրակը գրուած է երեսուն և հինգ յօդուածով, յորս կամփոփուի Եկեղեցական պատմութեան մանր ուսմունքը։ Վ՝ի հափառ Հայրապետի կողմից ինձ յանձնեալ լինելով զննել այն տետրակը, ըստ որում կրօնական գիրք՝ որ տպուելէն յառաջ Հոգևոր Իշխանութեան պիտի ներկայացուէր, մէջը նշմարուած պատմութեան ընդդէմ կարծիքը ասատէն կնշանակենք։

Պատանի վեցերորդ յօդուածի մէջ կգրէ. «Հայոց եկեղեցին կամելով յայտնել Քրիստոսի Յարութեան համար ուրախութիւնը, կանոն գրած է, որ այն օրը (Քրիստոսի Յարութեան կիրակի օրը ի զատկին) Պահանայք և դպիրք եկեղեցումը սպիտակ զգեստներով զարդարուին»։

Այս կանոնը ոչ գրուած է՝ չենք գիտեր. վասն զի Հայոց եկեղեցական կանոնների մէջ չենք գտնել, թէ և հեղինակը կգրէ թէ Հայոց եկեղեցին կանոն գրած է։

Իսկ Հայոց Եկեղեցին յօրինակ հրեշտակի ի հանդերձս սպիտակս երևելոյն Քրիստոսի գերեզմանում, արդարև սպիտակ զգեստ գործ կդնէ, չէ թէ բոլոր Պահանայք ու դպիրք, այլ միայն Իւղաբերից աւետարան կարդացողը և սարկաւագն և մոմ բռնող դպիրք, և այն՝ ոչ միայն զատկի օր, այլ և ամեն Յարութեան կիրակէ օրերը, Իւղաբերից աւետարան կարդալու ժամանակ. եթէ կայ այնպիսի եկեղեցի մի, որ զատկի կիրակէ օրը քահանայք և դպիրք եկեղեցումը սպիտակ զգեստներով կզարդարուին, այս եկամուտ է, գուցէ ուրիշ աղգերից առած։ — Եթէ արժանայիշատակ Հեղինակի այս եկեղեցական պատմութիւնը տպագրող նորա որդին՝ Հայոց եկեղեցւոյ դրած կանոնը ցոյց կտայ, մենք նախընթացաբար խոստանում ենք, որ այս մեր նշմարածը՝ կանոնին համաձայնացնենք։

Երեսուն և չորսերորդ յօդուածի մէջ՝ Հայոց ազգային եկեղեցական ժողովները քառասուն և եօթն միայն է թուել. սորա համար էլ կարծ ասենք։ Հեղինակը արդեօք իւր ընդունածը միայն կթուէ՝ եթէ Հայոց եկեղեցւոյն արած ժողովն ու ընդունածը. եթէ իւր ընդունածն է, պէտք էր մի առ մի թուել քառասուն և եօթն ժողովներն էլ, որ կարդացողը իմանար թէ հեղինակը Հայոց Եկեղեցւոյ ո՞ր ժողովքն է ընդունել, և ո՞ր մերժել։ Հայոց եկեղեցին ի սրբոյն Գրիգորէ և ցԳէ-